

պէս խնդրեմ ի հրամանուցէդ, զի զԵրեմիա որդեակդ, որ է եղբայր մեր հարազատ, լաւ պահեսցես և ըզդարձն նորին շուտով արասցես առ մեզ, զի բնաւ ամենևին հաւատարիմ մարդ չունիմ ի մօտս եւ ոչ օգնական եւ ոչ ձեռնտու, բայց ի ձերունի հօրէս՝ Տէր Մարտիրոս քահանայէ(¹) :

Պատմութենէն յայտնի է Երեմիայի Բերիա զըրկուիլը (1664 Սեպտ. 14), որպէսզի համոզէ Եղիազարը հրաժարիլ կաթողիկոսանալու իր տարադէպ ու մնաստակար նպատակէն: Երեմիա արդէն ինք ալ անձնապէս հակառակ էր Եղիազարի այդ ծրագրին, որուն իրագործումը կը նախատեսէր թէ ս'ըքան պառակտումներու և խռովութեանց դուռ պիտի բանար ազգին մէջ: Դժբախտաբար անյաջողութեան կը հանդիպի Երեմիայի առաքելութիւնը ու այդ պատճառաւ իր համակրութիւնը այնուհետև Յակօր կաթողիկոսի՝ Հայաստանեայց Եկեղեցոյ օրինաւոր հայրապետին կողմը կը դառնայ, և ուժացում առաջ կու գայ իր ու Եղիազարի յարաբերութեանց միջև: Ասիկա աղօտակի կը զգացուի՝ տարիներ վերջ առ Եղիազար ուղղած իր թուղթերուն մէջ:

Երեմիա Բերիայէն կ'անցնի Երուսաղէմ և 1665 տարուան Զատիկը հոն կ'անցընէ: Այնտեղէն «ի մուտ աւուրցս բարեկենդանին» Կ. Պոլսոյ իր բարեկամներուն ոտանաւոր ուղերձ մը կամ ողջունագիր մը կը զրկէ (Յաւել. էջ 551), որուն թուականն է Ի ԿԱԹՈՒԳԻՆ և «միով մասամբ աւելի», այսինքն 1113 + 1 = 1114 (= 1665):

Զէլէպի իր Երուսաղէմ բնակութեան միջոցին կը հիւրընկալուի աւագ-լուսարար Եղիա վարդապետի բը-

(1) ՍԻՈՆ, 1933, էջ 24: